

Այգնեան Արսէն արքեպիսկոպոսի մահից յետոյ միաբանութեան մէջ ծագած երկպառակութեան պատճառով Հռոմը նշանակել էր արքայի տեղակալ որոշ սահմանափակութիւններով: Կարծոււմ է, որ նոր արքային արքեպիսկոպոսութեան տիտղոս շնորհելով, Հռոմը վերականգնոււմ է միաբանութեան հին իրաւունքները:

Արարատի նախորդ համարից յայտնի է, որ Կ. Պօլսոյ հայ կաթողիկ ազգային վարչութիւնը չը կամեցաւ պատրիարք—կաթողիկոսացուների ցանկ ներկայացնել բարձրագոյն դրան, առարկելով, որ բոլոր եպիսկոպոսները, իբրև վիճակների առաջնորդներ, կառավարութեան յայտնի վստահելի անձինք են. այժմ Կ. պօլսոյ լրագիրները յայտնոււմ են, որ կառավարութիւնը պահանջել է օրէնքով սահմանուած ընտրելիների ցանկ. հայ կաթ. ազգ. վարչութիւնը այդ ցանկը ներկայացրել է և ապրիլի 10-ին միաձայն քուէարկութեամբ հայ կաթողիկների պատրիարք—կաթողիկոս է ընտրուել Ադանայի առաջնորդ Պօղոս արքեպիսկոպոս Թէրզեան: Հայ կաթողիկ հասարակութիւն շատ գոհ է այս ընտրութեամբ. որովհետև ընտրեալը ազգային ազատամիտ կուսակցութեան թեկնածուն էր:

Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՅԻ

(Церк. Вѣст.)

Վրաց եկեղեցի, Պրաւօսլաւ հոգևորականութեան ռոմիկների նախախաճաշիւ, Ծիակ. դպրոցների մասին:

— Լրագրները հազորդոււմ են, որ վրաց եկեղեցու անկախութեան մասին վրաց հոգևորականութեան հանրագիրը Ս. Սինօղը քննութեան առնելով, որոշել է խնդրի

լուծումն թողնել մինչև ապագայ տեղական եկեղեցական ժողով գումարելը:

Церк. Вѣст. № 12 յայտնում է, որ պետական Դուժան ցանկանում է թեմական առաջնորդների և փոխառնորդ եպիսկոպոսների համար հաստատուն ռոճիկ որոշել:

Թեմական առաջնորդները Պետական գանձարանից ստանում են 1500—3000 ռուբլի, բայց նրանք օգտւում են թեմական և վանքերի արդիւնքից, որից առաջ էր գալիս եկամուտի անհաւասարութիւն. ոմանք ստանում են տասնեակ հազարներից աւելի, իսկ ոմանք 4—5 հազար: Փոխառնորդ եպիսկոպոսներին ռոճիկներն էլ հաւասար չեն: Մի տեղ աւելի է, միւս տեղ պակաս:

Պետական Դուժան աւելի յարմար է գտնում բոլոր արդիւնքները կենդրոնացնել, և ապա ռոճիկների համեմատաբար հաւասարաչափ բաշխումն սահմանել: Ս. Սինոդը ինկատի ունենալով Պետական Դուժայի այս ցանկութիւնը, բարւոք համարեց մի յաճնաժողով կարգել ուսումնասիրելու այս գործը:

Церк. Вѣст. (№ 13) մէջ է բերել Սրբ. Սինոդի կազմած 1910 թուի համար բարձր և ստորին հոգևորականութեան ռոճիկների նախահաշիւը, որ մօտ $15\frac{1}{4}$ միլիոն է: Անցեալ 1909 թուին $14\frac{1}{2}$ միլիոնից աւելի էր:

Առաջնորդարանների և առաջնորդական աւագ եկեղեցիների համար որոշած էր 930 հազար ռուբլի. Այս թուի մէջ է 64 թեմերի եպիսկոպոսներին յատկացուած 200, 768 ռ. ռոճիկը, որի բաշխումն դարձեալ անհաւասար է. 64 եպիսկոպոսներից տարեկան ստանում են 30-ը՝ 1500 ական և 30-ը 4000 ական ռ., միայն Վարչափայի եպիսկոպոսը ստանում է 7828 ռ.

Առաջնորդարանների ծախքը տարբերւում է 3,200—11,000 մէջ և հասնում է մինչև 264₇ հազար ռ., ռոճիկի սակաւութեան պատճառով յատկացած են առաջնորդա-

բաններին հոգեր և սրիչ եկամուտներ, ուր չկան սրանք՝ պետական գանձարանից գումարներ:

1910 թ. նախահաշուի համեմատ քաղաքային և գիւղական հոգեորականութեան ընդամենը համար յատկացուած է 13,637,744 ա:

1842 թուից սկսած քաջանաներին արւում էր տարեկան ոսծիկ 100—180 ա. սարկաւազներին՝ 80—ական և կիսասարկաւազներին՝ 40 ա.: 1893 թուին Պետական Խոսհուրդը առաջադրեց Սոր. Սինոզին նշանակել տարեկան ոսծիկ քաջանաներին՝ 100—600 ա. սրտկաւազներին՝ 80—300 ա. և դպիրներին՝ 40—200 ա. Այսպէս միջին թիւը լինում էր 300—150—100 ա. որը և Սինոզը 1893 թ. յունիսի 9-ին ընդունեց:

Սակայն եկեղեցական 28,622 պաշտօնեաներին յատկացուած ոսծիկի բաշխումն անհաւասար էր և ոչ գոհացուցիչ: Արեւմտեան նահանգների եկեղ. պաշտօնեաներին աւելի ոսծիկ էր յատկացուած, թէ և նրանք պետութիւնից էլ ոսծիկ էին ստանում: Ամենից շատ ոսծիկ (2000 ա.) ստանում էին լեհական թագաւորութեան թեմերի ծխ. քաջանաները: Ատասահմանում եղած հոգևոր հաստատութիւնների համար Սոր. Սինոզի նախահաշուով յատկացուած է 274 հազար ա.

Առաջնորդներին Սոր. Սինոզի 1897 թուի հրամանով յատկացուած է իւրաքանքանչիւր թեմի վանքերի եկամուտների $\frac{1}{5}$ մասը:

Պետական Գումարի նախահաշուային յանձնաժողովը թէ 1908 և թէ 1909 թուին առաջնորդների ոսծիկների վերաբերութեամբ յայտնեց հետեւեալ ցանկութիւնը. 1. ստուգել առաջնորդարանների և վանքերի եկամուտների քանակը. 2. առաջնորդների ոսծիկների վերաբերութեամբ համեմատական հաւասարակշռութիւն պահպանել և գոյացած տնտեսութիւնը գործադրել բարենպատակ հաստատութիւնների, թեմի կրթական կարիքների, հոգեորականութեան և հօտի պէտքերին:

Օրեր պրոկուրորը երկրորդ կէտի վերաբերութեամբ

յայտնել է, որ Սրբ. Սինոդը նպատակայարժար է գտել մօտիկ ապագայում վերաքննել 1897 թուի կանոնները, ի նկատ առնելով վանական, մօտիկ ժամանակներումս տեղի ունեցած, ժողովի եզրակացութիւնն էլ. առաջին կէտի վերաբերութեամբ նա առաջ է բերել կոնսիստորիաների տեղական եկամուտներից և ծախքերից քաղուածքներն առաջնորդների ուսճիկների վերաբերութեամբ, որից երևում է, որ 1908 թ. եղել է

Կիեվիներ	.	.	70 ₅	Հազար ուրբի
Մոսկվայիներ	.	.	44	»
Պետերբուրգիներ	.	.	28 ¹ / ₄	»
Վոլքնիներ	.	.	22 ¹ / ₂	»
Նովգորոդիներ	.	.	15 ₄	»

Պերմիներ (ամենից սակաւ) 565 ու. 77 կօպ.

Առաջնորդարանների և առաջնորդների չընախատեսուած, բայց կոչման և պաշտօնի բերմամբ ծախքերը այնքան շատ են, որ նրանց եկամտի թուերի խոշորութիւնը չըպէտք է զարմանք պատճառի:

— Մայիսի 3—8 պէտք է գումարուեն Պետերբուրգում Սրբ. Սինոդի նախանդամ Անտօնի Մետրօպօլիտի նախագահութեամբ դպրոցական յանձնաժողովի նիստերը, որին հրաւիրուած են մասնակցելու մի քանի թեմերի դպրոցական մասնաժողովի ներկայացուցիչները, նիստերի նպատակը լինելու է եկեղ. դպրոցներում զօրացնել ժողովրդական ներկայացուցչութիւնը, բարւոքել ուսուցիչների ապագան, կանոնաւորել կրօնի դասուանդութիւնը, հնարաւոր դարձնել արհեստների և երկրագործութեան ուսուցումն և ծխական դպրոցների միջոցով տարածել առողջապահութեան մասին տարրական գիտելիքներ: Այս ապրիլի 2-ին Բարձրագոյն Հաստատուել է հոգևոր ճեմարանների նոր կանոնների ծրագիրը, որ դործագրութեան մէջ կը մտնի եկող տարուայ սկզբից:

— Պետական Դումայի դպրոցական յանձնաժողովի այն ենթադրութեան հանդէպ, թէ եկեղեցական դպրոցները պէտք է ենթարկել լուսաւորութեան նախարարութեան, Ս. Սինոդը մարտի 11-ին որոշել է, որ եկեղեցական ծխական դպրոցները պէտք է մնան Սինոդի լիակատար իրաւասութեան աակ, անկախ որ և է նախարարութիւնից։ Ուրիշ վարչութիւնների եկեղ. ծխ. դպրոցների կառավարութեան միջամտելը դպրոցում՝ առաջ կըբերի կազմալուծումն և խանգարումն։ Չը նայելով այս բանին, Մարտի 16-ին Պետ. Դումայի դպրոցական յանձնաժողովում եկեղ. ծխ. դպրոցները լուս. նախարարութեան ենթարկելու խնդիրը քուէարկելիս, ձայները երկու հաւասար մասի են բաժանուել և միայն նախագահի ձայնով խնդիրը վճռուել է դրական կերպով, այն է ընդհ. հիմունքներով, միւս տարրական դպրոցների պէս ենթարկել լուսաւորութեան նախարարութեան։

ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Անցեալ Մարտ ամսին օրթոդոքս երկու փոքր պետութիւնների՝ Բուլգարիայի և Սերբիայի թագաւորները Ս. Պետերբուրգից յետոյ, այցելեցին Կ. Պօլիս։

Բուլգարիայի թագաւորը այցելեց միայն Բուլգար Էկզարխարանը, իսկ Սերբիայի թագաւորը՝ Մարտի 22-ին յոյն պատրիարքարանը, ուր և հանդիսաւոր ընդունելութիւն գտաւ և շեշտուեցին յոյն և սերբ կրօնակից ազգերի սերտ յարաբերութիւնները։

Բուլգարիայի թագաւորը չայցելեց յոյն պատրիարքարանին, որովհետև Բուլգար եկեղեցին թէև օրթոդոքս, վըտարանջելով յոյն տիեզերական պատրիարքի գերիշխանութիւնից նկատուում է որպէս հերձուած, բացի այս յոյն և բուլգար ազգերը շատ էլ բարեացակամ չեն իրար։

«Христ. Чтение» ամսաթերթի ապրիլի տետրում տըպուած է «Չերնոգորիայի ծխական հոգևորականութեան մասին օրէնքի թարգմանութիւնը»։

Թարգմանչի ներածութիւնից տեղեկանում ենք, որ ազգային ժողովից (սկուպչչինա) ընդունուած այս օրէնքը հաստատել է Նիկոլայ իշխանը 1909 թուի օգոստոսի 31-ին և հոգևոր իշխանութեան համաձայնութեամբ արդէն մասամբ կիրառութեան մէջ է մտել:

1903 թուի վերջին հրատարակուեց Չիրնոգորիայի իշխանութեան մէջ գործող սրբ. Սինոզի մասին կարգադրութիւնը, իսկ 1904 թուի սկզբին՝ կոնսիստորիաների:

Սինոզի մասին կարգադրութեան մէջ որոշուած է, Սինոզի, սրպէս բարձրագոյն ատենի, ներքին և արտաքին յարաբերութեան սահմանը: Իսկ կոնսիստորիաների մասին կանոնադրութեան մէջ մանրամասնաբար պարզաբանուած են կոնսիստորիայի բաղկացութիւնը, նրա գործունէութեան շրջանը: Ա. թեմական վարչութեան վերաբերութեամբ (օրթոդոքս դաւանութեան, աստուածաշառութեան, եկեղեցու և եկեղեցական վարչութեան իրաւունքների, հոգևոր դատախարակութեան, եկեղեցիների շինութեան, հոգևորականութեան և նրա ձխական պաշտօնավարութեան մասին): Յօդ. 74—92, ծուխերի և եկեղեցական համայնքների գոյքերի կառավարութեան, կոնսիստորիաների դրամական գործերի մասին: Յօդ. 93—111, վանքերի և վանական կառավարութեան մասին, Բ. թեմական դատարանների վերաբերութեամբ (հոգևորականների զեղծումների մասին յօդ. 136—146), եկեղեցական պատիժների և ամուսնական գործերի մասին, Գ. կոնսիստորիական գործաւնութեան արտաքին ձեականութեան մասին (կոնսիստորիաների նիստերը, գործավարութիւնը, արձանագրութիւնները, վճիռները, նրա գլխաւնատունը և այլն):

Նոր օրէնքի մէջ հոգևոր բարձր Ատեանը կոչուած է ոչ թէ Սրբ. Սինոզ, այլ եպիսկոպոսների ժողով:

Ծխ. հոգևոր կանոնադրութիւնը ասու՛մ է, որ ծուխը պէտք է լինի ոչ աւելի 400-ից և ոչ պակաս 200-ից, յօդ. 6:

Ծխական քահանաները անփոփոխ պէտք է լինեն, նրանք կարող են փոխադրուիլ միայն իրանց խնդիրքով:

և համաձայնութեամբ և կամ զեղծման դէպքում՝ հոգևոր գատարանի վճռով:

Ծխական հոգևորականների հիմնական սոճիկը տարեկան 960 պերպեր* է, հինգ տարին մի անգամ՝ յաւելումն է լինելու իւրաքանչիւր 240 պերպերին՝ վեց պերպեր, այնպէս որ, ծառայութեան 30-րդ տարին սոճիկը հասնելու է 2400 պերպերի, յօդ. 18: Մի քանի քաղաքներում աւելադրութիւն կայ, յօդ. 19: Այս սոճկի հանդէպ հոգևորականները պարտաւոր են ժամերգութիւններն եկեղեցական հանդէսները, կիրակնօրեայ պատարագները ևլն, ձրի կատարել:

Հոգևորականութիւնը իւր սոճիկը, յաւելումները, կենսաթոշակը և լրացուցիչ վճարքը ստանում է պետական գանձարանից, յօդ. 20:

Վերև յիշուած սոճկով ծխական քահանաները ձրի կատարում են եկեղեցական բոլոր պաշտամունքները (ժամերգութիւն, պատարագ, մաղթանքներ, թափօրներ ևայլն.) յօդ. 21:

Ծխական քահանաները բացի սոճկից, ծխականների հոգևոր պահանջները կատարելու համար վարձատրւում են հետևեալ սակով.

- 1) Եկեղեցում մաղթանք կատարելու համար՝ 1 պերպեր, տանը՝ 2 պերպեր.
- 2) Ձէթ օրհնելու համար՝ 2 պերպեր.
- 3) Ձուր օրհնելու համար, երբ քահանան յատուկ է հրաւիրւում, եկեղեցում՝ 1 պերպեր, տանը՝ 2 պերպեր.
- 4) Ննջեցեալ յուղարկաւորելու համար 3 պերպեր.
- 5) Հոգեհանգստեան համար 3 պերպեր.
- 6) Պատարագին յիշատակելու համար՝ 15 կոպէկ.
- 7) Տանը ննջեցեալի վերայ աւետարան քաղելու համար 5 պերպեր.
- 8) Պսակի համար, բացի ծխ. քահանայից, իւրաքանչիւր հրաւիրած քահանային և սարկաւազին 4 պերպեր.
- 9) Վկայական քաղուածքի համար 1 պերպեր.

* Մի պերպերը հաւասար է 40 կոպէկի:

- 10) Հսկման համար 4 պերպեր.
 11) Մասնաւոր պատարագի համար հասարակ օրերին
 3 պերպեր.
 12) Քառասնօրեայ պատարագի համար 80 պերպեր.
 13) Նոր տուն օրհնելու համար 2 պերպեր.
 14) Երգմնեցնելու համար 2 պերպեր.
 15) Պատարագի համար եկեղեցի բերած գինին և նըշ-
 խարը մնում են քահանային: Յօդ. 22.

Չերնոգորիայի իշխանութիւնը օրթողոքս է: Նա օր-
 թողոքս հոգևորականութիւնը այսպէս ապահովելով, զան-
 ցառութեան չէ տուել կաթոլիկ հոովմէական հոգևորա-
 կանութիւնն էլ, որ նոյնպէս ռոճիկ է ստանում, յաւե-
 լումներով:

Այսպէս համեմատութեամբ առատօրէն վարձատրելով
 հոգևորականներին, պետութիւնը պահանջում է, որ հոգևո-
 րականները որոշ կրթական վարկ ունենան:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Միւնխենի օրեր կոնսիստորիայի նախագահ Հերան Պ.
 Բեցցելը անցած մարտ ամսին մի շրջաբերական է հրա-
 տարակել Բաւարիայի եկեղեցիներում՝ աստուածաբանական
 հերձուածների և վէճերի առիթով: Այդ փաստաթուղթը
 շատ խրատական է իմանալու գերմանական բողոքականու-
 թեան ժամանակակից կրօնական վիճակը և այն միջոցը, որ
 գործադրում է եկեղեցական իշխանութիւնը եկեղեցում
 ընդունուած դաւանութիւնը պահպանելու համար:

Շրջաբերականի մէջ բաւական պատկերացում Են
 բողոքական եկեղեցու լուրջ և վրդովեալ դրութիւնը, գիւ-
 ղական հասարակութեան մէջ անգամ «հակաեկեղեցական»
 հոսանքը, ազանդների ընդարձակ ծաւալ ստանալը, եկե-
 ղեցու հաղորդակցութիւնից խուսափելը, և անբարեացա-
 կամ վերաբերմունքը ուսուցիչների կողմից: Եկեղեցին
 դարձել է ուսումնասիրութեան չկօլա իսկ նրա ուսուցիչները
 քննադատներ, մինչդեռ նրանք պէտք է լինէին խորհուրդ-

ների մատակարարողներ, Բեցցելը եկեղեցու վերաբերու-
թեամբ վճռականորէն դէմ է քննադատութեան և աշա-
տամտական ուղղութեանը Բեցցելը ասում է. «Աստուա-
ծաբանական տեսութիւնները յարգելի են, քայց կան կրօ-
նական բաներ, որոնց վերաբերութեամբ երբ բանականու-
թիւնը պատուիրում է ծունկ խոնարհել փառասրեալ
Յիսուսին և երկրպագել նրան որպէս Աստուծոյ, չպէտք է
տեղի տալ ուրիշ հակառակ կարծիքի»:

Բեցցելի այս կոչը համակրութիւն է գտել ընդարձակ
չրջաններում, որոնք քաջալերում են թէ նրա հայեացքնե-
րը արտայայտելու միջոցը և թէ գործառնութեան եզա-
նակը եկեղեցու հաւատը պաշտպանելու վերաբերութեամբ:

Ազատամիտ հոսանքին հետևողները քննադատում են
Բեցցելի շրջաբերականը, առարկելով, որ աւետարանի
խօսքը պէտք է ազատորէն, առանց կանխակալ կաշկան-
դումների քարոզուի:

Հաննովերում՝ ևս մարտի վերջին (ն. ա.) գումարուել
է եկեղեցական սօցիալական 15-րդ կոնգրէսը Արարատի
ընթերցողներին (մարտ եր. 222—226) յայտնի է, որ
Սկովտիայի էդինբուրգ քաղաքում ևս պէտք է այս տարի
յուլիս ամսին գումարուի միսիօներական համաժողով:

Կրօնական այս համատարած շարժումն ցոյց է տալիս,
որ եկեղեցին ընդհանուր հետաքրքրութեան առարկայ է.
մեծ ջանքեր են լինում յօգուտ եկեղեցու միութեան և
նրա անազարտ պահպանութիւն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԶԱՏ ԵԿԵՂԵՅԻ

Անգլիայի ազատ եկեղեցիների ազգային խորհրդի
նիստերը.

Ամեն տարուայ պէս այս տարի էլ մարտի սկզբնե-
րին Հուլիում գումարուել է Անգլիայի ազգային աւետա-
րանական ազատ եկեղեցիների ժողովը, որին մասնակցել
են մօտ 2000 ներկայացուցիչներ: Ժողովը քննելով ան-
ցեալը եկել է այն եզրակացութեան, որ ազատ եկեղեցի-

ների գործունէութիւնը ընդհանրապէս հրապուրուած է եղել վերջին տարիներում՝ աւելի արտաքինով և քաղաքականութեամբ և դրանց շահերին է ծառայել, այժմ՝ ժամանակ է վերադառնալ զուտ եկեղեցու գործի շինութեանը:

Նախագահը թուել է անյաջողութեան պատճառները: Նա խոստովանել է, որ քարոզիչները պարծունեայ են, բայց տպաւորութիւն չեն գործում, կարողանում են հետաքրքրել ունկնդիրներին, բայց չեն կարողանում ազդել նրանց վերայ: Կարողանում են շարժել նրանց զգացմունքը, բայց չեն կարողանում զգալ տալ մեղքի դառնութիւնը, չեն դարձնում յապաշխարութիւն:

Ժողովի նախագահը յարգօրում է քարոզիչներին, որ եթէ կամենում են որ իրանց քարոզները լինեն ազդող, պէտք է ու Ռիբը քարոզեն, բնաբան վեր առնելով առսքեալների գրուածքները, ստիպողաբար յանձնարարել է, որ քարոզիչները խուսափեն չափազանցութիւններից, ճախարանութիւններից, սառն պաշտօնականութիւնից, կամ աւետարանի որ և է կէտը մեքենաբար, առանց ներշնչման բացատրելուց: Աշխարհս, ասել է նախագահը, յոգնել է պաշտօնականութիւնից և ծարաւի է կենդանի մարդու, նրան պատուող պէտք չէ, այլ մարգարէ է հարկաւոր:

Ժողովի մի անդամը քննադատել է անգլիական աւետարանական ազատ եկեղեցու գործունէութիւնը, ասելով, որ սակաւ է ուշք դարձնում ժողովրդին ծառայելու գործին, անձնագործութիւն չկայ: Ազատ եկեղեցու անդամներից շատերը, որ և է ակումբի անդամի պէս, վճարում են սրոշեալ տուրքը և էլ ոչ մի բանի համար հոգս չեն անում, հարկաւոր է համարուել, որ քարոզիչները այցելեն իրանց ծուխերին:

ԵԿԵՂԵՅԻՆ ՇՈՒԷՅՅԱՐԻԱՅՈՒՄ

Մարտի 6-ին (ն. տ.) ժողովրդական վճուով Շ վէյցարիայում ընդունուել է եկեղեցին պետութիւնից բաժանելու նախագիծը:

22000 իրաւասուներից ներկայ են եղել 8449 հոգի, որից 7483 թեր հմիայն 1036 հոգին գէմ են ձայն տրւել: Նոր օրէնքը զօրութեան մէջ կը մտնի 1911 թուի ապրիլի 1-ին:

Խնդրի այսպիսի լուծմանը նպաստել են պապական կաթողիկոսները, որոնք 1875 թուին չը կամեցան պետական հակազութեան ենթարկուել, այս հակազութեան ենթարկուելով նրանք կը դառնային պետութիւնից սոճիկ ստացող պետական եկեղեցի: Այն ժամանակ պետական համարուեցին միայն երկու եկեղեցիները — բողոքականը և հին կաթողիկոսականը:

Կրօնի թուլանալու հետեւանքները Քրիստոսիայում

Երկր — լրագրում տպուած է «Univers»-ի մի դիտողութիւնը Գերմանիայի համեմատութեամբ Ֆրանսիայի ազգաբնակչութեան աստիճանաբար նուազելու պատճառների մասին:

Երկրի կարծիքով ֆրանսիայի ազգաբնակչութեան նուազելու պատճառներն են բարոյական սկզբունքի թուլանալու հետեւանքով զեղխութիւնը, շուայտութիւնը, մոլութիւնները, խայտառակ արատները ևն:

1870 թուի պատերազմից յետոյ, Ֆրանսիան ու Գերմանիան, որ երկրի տարածութեամբ հաւասար են, ունէին համարեա հաւասար բնակիչներ 37—38 միլիոն: Այժմ Գերմանիայում կայ 64 միլիոն, իսկ Ֆրանսիայում՝ 39 միլիոն: Վերջին տարիներում Ֆրանսիայում, չընայելով որ համաճարակներ չեն եղել, մահացութիւնը վեց անգամ աւելի է եղել քան ծնունդները:

10,000 բնակչին մահացութիւնն է— Ֆրանսիայում՝ 200, Գերմանիայում՝ 197, Անգլիայում՝ 164, Հոլանդիայում՝ 159, Շվեյցարիայում՝ 154, Գանիայում՝ 148, Նորվեգիայում՝ 145:

«Մեր հայրենիքի այս ողբալի դրութիւնը, ասում է Փարիզի լրագիրը, հետեւանք է շատ պատճառների, բայց

առաջինը բարոյական պատճառներն են: Կեանքի ծանր պայմանները ազբատ և թշուառ ընտանիքներում աւելացնում են մահացութիւնը, բայց ազբատ ընտանիքներում աւելի են լինում ծնունդները քան հարուստ ընտանիքներում:

«Պետութիւնը պէտք է հոգայ ազբատ և թշուառ ընտանիքների տնտեսութիւնը բարւոքել: Բայի սրանից, պէտք է եռանդուն կերպով մաքառել ազգի կորստեան պատճառ եղող խայտառակ արատների դէմ: Բայց դրա համար անհրաժեշտ է վերականգնել յարգանքը դէպի կրօնքը, վերադարձնել եկեղեցուն մատաղ սերնդին դաստիարակելու ազատութիւնը. որովհետև միայն հաւատն է տալիս թոյլ մարդկանց բարոյական նեցուկս:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գագիկ թագաւորի Աւեսարանը.

—(Երուսաղէմ հ. 2556) 1028—1064 թուական.

Երուսաղէմի Հայոց սուրբ Յակոբայ վանքի նշանաւոր ձեռագրերիցն է Կարսի կամ Վանանդ դաւառի Աբասի որդի Գագիկ թագաւորի աւետարանը, որը 1908 թ. իմ ճանապարհորդութեան ժամանակ մանրամասն նկարագրել էմ և այժմ հրատարակում եմ հրաւիրելով մասնագէտների ուշադրութիւնը:

Կարսի փոքրիկ թագաւորութիւնը ծագումն առնելով Անիի Բագրատունիներից 961 թուին, շարունակուում է մինչև 1064 թիւը, ուրեմն ուղիղ մի դար: Այդտեղ առաջին թագ կայողն էր Աշոտ Երկաթի թոռ Մուշեղը, որ 24 տարի թագաւորելուց յետոյ, ժառանգ թողեց իւր որդի Աբասին, իսկ սա 45 տարի կառավարեց: Սորա որդի Գագիկը, որ կրում էր Ծահանշահ մեծագոչ արագոսը 35 տարի իշխելով, ստիպուած եղաւ, երբ Անին ընկաւ յունաց և յետոյ պարսից ձեռքը, հետևելով Վասպուրականի Յենեքերիմ և Անիի Գագիկ թագաւորներին, ապաստան խնդրել յունաց Տուկիծ կայսրից: Վեր-